ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍՈՒՐԷՆ ՍԱՐԴԱՐԵԱՆ ՈՐ ՅՕԴԵՍԱ, ՈՒԿՐԱԻՆԱ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու գնահատանքն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ մեր ժողովրդի հաւատաւոր զաւակիդ:

Մեծարգոյ պրն. Սարդարեան, Ուկրաինայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթեանից գոհունակութեամբ փոխանցանք, որ Դուք անխոնջ նուիրումով, ազգանուէր ու եկեղեցաշէն արդիւնաշատ գործունէութեամբ լծակից էք հոգեւոր մեր սպասաւորներին եւ տարիներ շարունակ բարի ծառայութիւններ էք մատուցում ի նպաստ Տիրախնամ թեմի շինութեան ու պայծառութեան:

Ձեր հաւատն առ Աստուած եւ սէրը առ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին դրսեւորուեցին Օդեսայի հայ համայնքի կեանքում սրանձնած գովելի յանձնառութիւններով: Թեմական առաջնորդի վկայութեամբ Դուք ազնիւ հոգով Ձեր նիւթական կարողութիւնները ի սպաս բերեցիք Օդեսայում հայկական եկեղեցու կառուցման, ապա եւ ամբողջական նորոգութեան ու բարեզարդման աշխատանքներին: Օդեսաբնակ հաւատաւոր Մեր զաւակներիդ զոհողութիւններով կառուցուած Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին արդեն մէկ ու կէս տասնամեակ իր դռներն է բացել բարեպաշտ հայորդեաց առջեւ, ովքեր սրբավայրի կամարների ներքոյ փառաբանում են Բարձրեալ Տիրոջը եւ արժանանում երկնապարգեւ շնորհների: Ձեր գործերով Դուք, արդարեւ, աստուածային օրհնութիւնն էք յաւելում Ձեր եւ համայն մեր ժողովրդի կեանքում՝ վարձք ամբարելով երկնքում:

Ազգօգուտ ու եկեղեցանուէր Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով եւ սիրով ընդառաջ թեմական առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը բարեխօսութեամբ մեր հաւատի հօր՝ Ս. Գրիգոր

Լուսաւորչի պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն, եկեղեցաշէն ու ազգօգուտ գործերի յաջողութիւններ:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ-
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 591